«Ադամիում»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

Երևան – 2026

«ԱԴԱՄԻՈՒՄ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«ԱԼՖԱ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel (+374 10) 399 855, (+374 55) 560 550
www.alfaaudit.am, info@alfaaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ադամիում»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
ղեկավարությանը և մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ադամիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:
Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում

բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերությյան գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք։

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերությյան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար։

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն։

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է։ Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա։

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն։ Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար։ Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա։ Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը։ Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա։ Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ալֆա Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն/աուդիտոր Լ.Պողոսյան

«29» հունիս 2026թ.
Երևան

«Ադամիում» ՍՊԸ

առ 31-ը դեկտեմբերի 2025թ դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ		31.12.2025 հազ. դրամ	31.12.2024 հազ. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	*1,537,230*	*3,477,728*
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	8	*290,870*	*346,726*
Ոչ նյութական ակտիվներ		*7,500*	*7,500*
Ֆինանսական ներդրումներ	9	*8,041,045*	*6,684,875*
Հետաձգված հարկային ակտիվներ	10	*13,233*	*10,640*
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	11	*2,683,763*	*305,985*
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*12,573,641*	*10,833,454*
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	12	*4,274,088*	*4,887,783*
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	*6,666,851*	*4,350,892*
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	9	*53,110*	*1,400,000*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	*1,509,340*	*1,548,406*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*12,503,389*	*12,187,081*
Ընդամենը ակտիվներ		25,077,030	23,020,535
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		*210,157*	*210,157*
Չբաշխված շահույթ		*18,914,233*	*15,668,581*
Ընդամենը սեփական կապիտալ		19,124,390	15,878,738
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	15	*399,000*	-
Վարձակալության գծով պարտավորություն	16	*290,728*	*344,286*
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*689,728*	*344,286*
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	15	*3,599,405*	*5,837,715*
Վարձակալության գծով պարտավորություն	16	*53,558*	*47,820*
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	*1,235,336*	*712,444*
Շահութահարկի գծով պարտավորություն		*354,511*	*185,799*
Պահուստներ	18	*20,102*	*13,733*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*5,262,912*	*6,797,511*
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		25,077,030	23,020,535

6-ից 35-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. հունիսի 29-ին:

Արա Բաղշեցյան
Տնօրեն

Մագդա Կոթոյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Ադամիում» ՍՊԸ

2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

		2025	2024
		հազ. դրամ	հազ. դրամ
Հասույթ	19	*17,946,928*	*13,602,775*
Ինքնարժեք	20	*(11,981,368)*	*(9,004,344)*
Համախառն շահույթ (վնաս)		**5,965,560**	**4,598,431**
Այլ եկամուտներ		*60,136*	*10,889*
Իրացման ծախսեր	21	*(1,244,051)*	*(1,079,335)*
Վարչական ծախսեր	22	*(563,351)*	*(628,886)*
Այլ ծախսեր	23	*(276,463)*	*(227,259)*
Գործառնական շահույթ (վնաս)		**3,941,830**	**2,673,840**
Ֆինանսական եկամուտներ	24	*162,623*	*153,251*
Ֆինանսական ծախսեր	25	*(114,388)*	*(333,878)*
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ/վնաս	26	*34,027*	*29,196*
Շարունակական գործունեությունից շահույթ (վնաս) մինչև հարկումը		**4,024,093**	**2,522,409**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	27	(778,442)	(438,914)
Տարվա շահույթ (վնաս) հարկումից հետո		**3,245,651**	**2,083,495**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**3,245,651**	**2,083,495**

6-ից 35-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Ադամիում» ՍՊԸ

2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	**210,157**	**13,585,086**	**13,795,243**
Տարվա շահույթ	-	2,083,495	2,083,495
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	**210,157**	**15,668,581**	**15,878,738**
Տարվա շահույթ	-	3,245,651	3,245,651
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2025թ.	**210,157**	**18,914,232**	**19,124,389**

6-ից 35-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Ադամիում» ՍՊԸ

2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2025-31.12.2025	01.01.2024-31.12.2024
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	20,206,693	16,917,041
Վճարումներ մատակարարներին	(13,228,763)	(12,743,545)
Վճարումներ աշխատակիցներին	(570,675)	(549,195)
Վճարումներ բյուջե և սոց հիմնադրամ, այդ թվում՝	(4,580,174)	(3,245,138)
Ռեզիդենտի շահութահարկ	*(614,916)*	*(642,064)*
Այլ մուտքեր	31,820	1,475
Այլ ելքեր	(11,898)	(68,852)
Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից	**1,847,004**	**311,786**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերում	(32,071)	(138,170)
Տրամադրված փոխառություններ	(1,074,855)	(1,400,000)
Տրամադրված փոխառությունների մարում	725,000	-
Ստացված տոկոսներ	154,155	153,251
Զուտ դրամական միջոցներ ներդրումային գործունեությունից	**(227,771)**	**(1,384,919)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված վարկեր և փոխառություններ	2,303,859	9,609,908
Վարկերի և փոխառությունների մարում	(3,859,978)	(7,927,964)
Վճարված տոկոսներ	(81,039)	(277,234)
Զուտ դրամական միջոցներ Ֆինանսական գործունեությունից	**(1,637,158)**	**1,404,711**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	**(17,925)**	**331,577**
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	**(21,141)**	**(29,587)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**1,548,406**	**1,246,415**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	**1,509,340**	**1,548,406**

6-ից 35-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Ադամիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

2025թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

«Ադամիում» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է: Ընկերությունը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից 2004թ. հուլիսի 16-ին: Պետական գրանցման վկայականի համարն է՝ 282.110.05012, ՀՎՀՀ-ն՝ 01003256: Ընկերությունը հանդիսանում է «Ջերելո» ՍՊԸ-ի իրավահաջորդը:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 210.157.000 /երկու հարյուր տաս միլիոն հարյուր հիսունյոթ հազար/ ՀՀ դրամ: Ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և դրանց 68.153 %-ը պատկանում է Գայանե Վերդյանին, 21.242 %-ը պատկանում է Վահրամ Ադամյանին իսկ 10.605 %-ը Աթաբեկ Ադամյանին:

Ընկերության իրավաբանական և գործունեության հասցեներն են համապատասխանաբար՝ ք.Երևան, Քանաքեռ Զեյթուն, Ռուբինյանց փող. 21/3 19, ք. Երևան, Գրիբոյեդովի 21/9շ.:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2025 թվականին կազմել է 295 անձ, իսկ 2024 թվականին՝ 278 անձ:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության միանձյա գործադիր մարմինը՝ տնօրենը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակն է ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների ներմուծումն ու մանրամեծածախ առևտուրը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չունի դուստր և կախյալ ընկերություններ:

Գործարար միջավայր

Ներկայումս համաշխարհային տնտեսությունը գտնվում է բարձր աշխարհաքաղաքական լարվածության ազդեցության ներքո: Իրանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև ռազմական գործողությունները հանգեցրել են գլոբալ շուկաների անկայունության աճին: Իսկ ռուս-ուկրաինական պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

2025 թվականի ընթացքում ՀՀ-ում 12-ամսյա գնաճն աստիճանաբար արագացել է: Գնաճի նման վարքագծին հիմնականում նպաստել են համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումները, որոնք տարեվերջին որոշակիորեն մեղմվել են: Միևնույն ժամանակ, ներմուծվող ոչ պարենային ապրանքներից եկող գնանկումային ճնշումները տարվա ընթացքում աստիճանաբար չեզոքացել են՝ մայիսից մտնելով թույլ գնաճային տիրույթ: 2025 թվականին ՀՀ-ում տնտեսական ակտիվությունը որոշակիորեն ավելացել է՝ պայմանավորված գերազանցապես շինարարության և ծառայությունների ոլորտներում արձանագրված բարձր աճով, ինչի պարագայում տարեկան տնտեսական աճը կազմել է 7.2%, այդ թվում՝ պայմանավորված նաև որոշ ժամանակավոր, ոչ կառուցվածքային գործոնների վերականգնմամբ: Այսպիսով՝ գնաճային սպասումները շարունակել են կայուն նվազել: 2025 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է աստիճանաբար կարգավորել դրամավարկային պայմանները՝ նվազեցնելով քաղաքականության տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 0.5 տոկոսային կետով:

Սույն ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության

ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՖՀՄՍ-ներ):

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

Ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում այդ հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության սկզբունք. Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

Փոխկապակցված անձանց հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը ունենում է գործարքներ իր կապակցված կողմերի հետ: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ առկա չէ ակտիվ շուկա նման գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում. Ակնկալվող պարտքային կորուստների չափումը կարևոր գնահատում է, որը իրականացվում է մեթոդաբանության, մոդելների և բազային տվյալների օգտագործմամբ: Հետևյալ բաղադրիչները զգալի ազդեցություն ունեն պարտքային կորուստների գնահատված պահուստի վրա՝ դեֆոլտի որոշումը, պարտքային ռիսկի էական աճը, դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ենթարկվածությունը ռիսկին և դեֆոլտի դեպքում կորստի գումարը, ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները:

Պարտքային ռիսկի էական աճ. Պարտքային ռիսկի էական աճի փաստման համար Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի ժամկետի ընթացքում դեֆոլտի սկսվելու ռիսկը համեմատում է սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ դեֆոլտի սկսվելու ռիսկի հետ: Գնահատման գործընթացը դիտարկում է պարտքային ռիսկի հարաբերական աճը, այլ ոչ թե հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկի կոնկրետ մակարդակը:

5. Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ստորև նշված են այն փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2025թ.-ին.

- Փոխանակելիության բացակայություն ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ։

5.1. Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, վտվտխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից։
Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառե|ի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից։
Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում» ՖՀՄՍ 18,
- «Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոպխություններ)

6. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

6.1. Չափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով կամ ամորտիզացվող արժեքով։

6.2. Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի։ Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները։ Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր։
Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը։
Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ։
Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով։ Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ։
Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական

փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:
Ընկերությունը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Ընկերության ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

6.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր) ճանաչում է առանձին ակտիվ այն դեպքում, երբ՝ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Ընկերությունը հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին չափում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ կանխիկ գնի համարժեքն է: Եթե վճարումը վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից հետաձգվում է, սկզբնական արժեքը ապագա բոլոր վճարումների ներկա արժեքն է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով) հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

ա) Ընկերության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը,

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը,

գ) տեխնիկական հնացածությունը,

դ) հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Շենքեր, շինություններ	20-40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	8-10 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	8-10 տարի
Տրանսպորտային միջոց	8-10 տարի
Համակարգչային տեխնիկա	1-5 տարի

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը։

Հետագա ծախսումները

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները։ Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է)։ Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում)։

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից։

6.4. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները։

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1 տարի ծրագրի և 1 տարի լիցենզիաների համար։

6.5. Ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել։ Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը։

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար։ Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր)։

Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը։ Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ։

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով։ Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում։

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ։

6.6. Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման ընթացքում օգտագործելու

համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

6.7. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչում

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը լավագույնս ներկայացվում է գործարքի գնով: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթը կամ վնասը գրանցվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է բացահայտվել միևնույն գործիքում դիտարկելի շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի մուտքային տվյալները ներառում են միայն դիտարկելի շուկայական տվյալները:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Չափման կատեգորիաներ

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները. չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով և չափվում են ամորտիզացված արժեքով: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը կախված է ակտիվների պորտֆելի կառավարման համար Ընկերության բիզնես մոդելից, և ակտիվի դրամական հոսքերի բնութագրերից:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում-ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ

Ելնելով կանխատեսումներից, Ընկերությունը հաշվարկում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները և ճանաչում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների համար պարտքային կորուստների գնահատված պահուստը:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստը: Իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով չափվող պարտքային գործիքների ամորտիզացված արժեքի փոփոխությունները, առանց ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստի, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները արտացոլվում են այլ համապարփակ եկամտում «այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային գործիքներից եկամուտները՝ հանած ծախսերը» հոդվածում:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Ընկերությունը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ, բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ.

(ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ

պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ

(բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ

(գ) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարգևատրումները կամ

(դ) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են և ցպահանջ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը և, որպես բաղադրիչ, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են դրամական միջոցներում և դրամական միջոցների համարժեքներում, իսկ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ պարտավորություններում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: Պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ապագայամետ գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»–ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող

գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է Ծանոթագրություն 31-ում:

6.8. Ֆինանսական պարտավորություններ

Ճանաչում

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Ֆինանսական պարտավորությունների չափման խմբեր

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների, և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի և վարկերի տրամադրման պարտավորությունների:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության զեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած զուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է

- որպես սեփական կապիտալի այլ տարր, եթե ֆինանսական պարտավորությունը մասնակիցների ու նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունների գծով է, և
- շահույթում կամ վնասում, եթե ֆինանսական պարտավորությունը այլ կողմերի գծով է:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

6.9. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց կազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող

փոխհատուցումներն են: Ընկերությունը աշխատակիցների բոլոր այն հատուցումների ծախսումները, որոնց նկատմամբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանն ծառայություններ մատուցելու արդյունքում ձեռք են բերել իրավունք, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն, աշխատակցին ուղղակիորեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե վճարված գումարը գերազանցում է մինչև հաշվետու ամսաթիվը մատուցած ծառայությունից առաջացած պարտականության գումարը, Ընկերությունը այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ երբ այլ ՖՀՄՍ-ներով պահանջվում է, որ ծախսումը ճանաչվի որպես ակտիվի արժեքի մաս, ինչպիսիք են պաշարները կամ հիմնական միջոցները:

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

ա) Աշխատավարձը

բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսինն են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,

գ) պարգևավճարները:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է նրանց հետագա փոխհատուցելի բացակայությունների իրավունքը: Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է չզեղչված լրացուցիչ գումարով, որը Ընկերությունը ակնկալում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքի արդյունքում:

Ընկերությունը պարգևավճարներից ակնկալվող ծախսումները ճանաչում է այն ժամանակ երբ կազմակերպությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

6.10. Վարձակալություն

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում պահեստի, գրասենյակային տարածքների, ինչպես նաև խանութ-սրահների համար: Ընկերությունը չի կնքում վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր:

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ Փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի

օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում:Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

6.11. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ Ճանաչում

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Չափում

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Ձեղչման դրույքը (կամ դրույքները) այն դրույքն է (կամ դրույքները), որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Ձեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

6.12. Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում բեռնափոխադրման և առաքման ծառայություններից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-

քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը: Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուդ առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

6.13. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը.

Արտարժույթ	31.12.2025	31.12.2024
1 ԱՄՆ դոլար	381.36 ՀՀ դրամ	396.56 ՀՀ դրամ
1 եվրո	449.01 ՀՀ դրամ	413.89 ՀՀ դրամ
1 ռուբլի	4.8711 ՀՀ դրամ	3.71 ՀՀ դրամ

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

- *Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը*

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

6.14. Սխալներ

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա

կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար։

6.15. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է։

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում։

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ։

6.16. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը։

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ։ Երբ Ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած։

7. Հիմնական միջոցներ

	Հողամասեր	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական-տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Կառուցվող հիմնական միջոցներ	**Ընդամենը**
Սկզբնական արժեք								
Առ 01.01.2024թ.	**2,849,627**	**252,018**	**202,981**	**589,964**	**146,393**	**408**	**158,731**	**4,200,123**
Գնում	-	8,181	17,892	103,960	2,222	27	160,767	**293,049**
Օտարում	-	-	-	(72,298)	-	-	(305,985)	**(378,283)**
Առ 31.12.2024թ.	**2,849,627**	**260,199**	**220,873**	**621,626**	**148,615**	**435**	**13,513**	**4,114,889**
Գնում	-	-	7,952	75,366	21,644	-	18,192	**123,154**
Օտարում/դուրսգրում	(1,900,000)	-	-	(94,365)	(12,997)	-	(13,513)	**(2,020,874)**
Առ 31.12.2025թ.	**949,627**	**260,199**	**228,825**	**602,627**	**157,262**	**435**	**18,192**	**2,217,168**
Մաշվածություն								
Առ 01.01.2024թ.	**-**	**(71,073)**	**(149,720)**	**(326,578)**	**(65,549)**	**(16)**	**-**	**(612,935)**
Հաշվարկ		(9,437)	(21,779)	(55,916)	(7,497)	(51)	-	**(94,680)**
Օտարում			-	70,454	-	-	-	**70,454**
Առ 31.12.2024թ.	**-**	**(80,510)**	**(171,499)**	**(312,040)**	**(73,046)**	**(67)**	**-**	**(637,161)**
Հաշվարկ		(9,582)	(19,889)	(61,078)	(8,344)	(59)	-	**(98,953)**
Օտարում			-	56,175	-	-	-	**56,175**
Առ 31.12.2025թ.	**-**	**(90,092)**	**(191,388)**	**(316,943)**	**(81,390)**	**(126)**	**-**	**(679,939)**
Հաշվեկշռային արժեք								
Առ 31.12.2024թ.	**2,849,627**	**179,690**	**49,374**	**309,586**	**75,569**	**368**	**13,513**	**3,477,728**
Առ 31.12.2025թ.	**949,627**	**170,108**	**37,437**	**285,685**	**75,872**	**309**	**18,192**	**1,537,230**

Ֆինանսական տարվա ընթացքում հաշվարկվել է 98,953 հազ. դրամի մաշվածություն, որից 75,092 հազ. դրամը ներառվել է իրացման ծախսերում, 23,861 հազ. դրամը՝ վարչական ծախսերում:

Համադրելի տարվա ընթացքում հաշվարկվել է 94,680 հազ. դրամի մաշվածություն, որից 80,010 հազ. դրամը ներառվել է իրացման ծախսերում, 14,670 հազ. դրամը՝ վարչական ծախսերում:

31.12.2025թ.-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված հիմնական միջոցներ: Հիմնական միջոցների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ և ձեռք բերման պայմանագրային հանձնառություններ չկան:
31.12.2025թ.-ի դրությամբ 35,728 հազար դրամ արժողությամբ արտադրատնտեսական գույքի գծով մաշվածություն չի հաշվարկվել՝ դրանց շահագործման չհանձնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար մատչելի չլինելու պատճառով:
31.12.2025թ.-ի դրությամբ 302,991 հազ. դրամ սկզբնական արժեքով 1497 անուն (31.12.2024թ.-ի դրությամբ 297,365 հազ. դրամ սկզբնական արժեքով 1381 անուն) հիմնական միջոցներ հաշվառված են զրոյական հաշվեկշռային արժեքով:

8. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Սկզբնական արժեք	
01.01.2024թ.	**509,090**
Ավելացում	-
Նվազեցում	-
Առ 31.12.2024թ.	**509,090**
Ավելացում	-
Նվազեցում	-
Առ 31.12.2025թ.	**509,090**
Մաշվածություն	
Առ 01.01.2024թ.	**(114,552)**
Հաշվարկ	(47,812)
Դուրսգրում	-
Առ 31.12.2024թ.	**(162,364)**
Հաշվարկ	(55,857)
Դուրսգրում	-
Առ 31.12.2025թ.	**(218,220)**
Հաշվեկշռային արժեք	
Առ 31.12.2024թ.	**346,726**
Առ 31.12.2025թ.	**290,870**

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվն իրենից ներկայացնում է Ընկերության կողմից վարձակալված թվով չորս անշարժ գույքեր:

9. Ֆինանսական ներդրումներ

	31.12.2025	**31.12.2024**
Ոչ ընթացիկ ներդրումներ		
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող բաժնեմասեր ասոցիացված կազմակերպությունում	6,714,580	6,714,580
Ճշգրտումներ ասոցիացված կազմակերպության վնասի գծով	(86,735)	(42,905)
Այլ ֆինանսական ներդրումներ	13,200	13,200
Տրամադրված փոխառություններ	1,400,000	-
	8,041,045	**6,684,875**

Ընթացիկ ներդրումներ		
Տրամադրված փոխառություններ	44,642	1,400,000
Տրամադրված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսներ	8,468	-
	53,110	**1,400,000**

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող բաժնեմասերը ասոցիացված կազմակերպությունում «Նուովո Վելոդրոմո» ՍՊԸ-ի 50% բաժնեմասերն են, որոնց անվանական արժեքը 6,714,580 հազ. Դրամ է: «Նուովո Վելոդրոմո» ՍՊԸ-ի հետձեռքբերումային վնասը կազմել է 173,470 հազ. դրամ, որի 50%-ի չափով արժեզրկվել են ֆինանսական ներդրումները:

Փոխառությունները տրամադրվել են «Արֆին» ՈՒՎԿ ՍՊԸ-ին 11% տարեկան տոկոսադրույքով և մինչև 2027 թվականը մարման ժամկետով:

Ընթացիկ տրամադրված փոխառությունները կապակցված կողմերին տրամադրված անտոկոս փոխառություններն են:

10. Հետաձգված հարկային ակտիվներ

Հազ. դրամ	**31.12.2025**	**31.12.2024**
Տարեսկզբի մնացորդը	***10,640***	***9,810***
Շահույթում կամ վնասում ճանաչված	2,593	830
Տարեվերջի մնացորդ	***13,233***	***10,640***

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվել են ժամանակավոր տարբերությունների այն չափով, որքանով Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ դրանք փոխհատուցելի են:

2025թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորվում են հետևյալ կերպ.

Հազ. դրամ	**01.01.2025**	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**31.12.2025**
Հետաձգված հարկային ակտիվներ			
Վարձակալության գծով պարտավորություն	70,579	1,146	71,726
Աշխատավարձի գծով պահուստ	2,472	(8,608)	6,136
	73,051	**(7,462)**	**65,590**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	62,411	10,054	52,357
	62,411	**10,054**	**52,357**

2024թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորվում են հետևյալ կերպ.

Հազ. դրամ	**01.01.2024**	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**31.12.2024**
Հետաձգված հարկային ակտիվներ			
Վարձակալության գծով պարտավորություն	37,432	33,147	70,579
Աշխատավարձի գծով պահուստ	3,308	(835)	2,472
	40,740	**32,312**	**73,051**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	30,930	31,482	62,411
	30,930	**31,482**	**62,411**

11. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Այլ ոչ ընթացիկ ակտիվներում ներառված են կապալառուի կողմից կառուցվող բազմաբնակարան շենքի կառուցման համար կատարված ծախսերը և հողամասը 1,900,000 հազար դրամ արժեքով: Բազմաբնակարան շենքի ավարտը նախատեսված է հաշվետու ժամանակաշրջանից հետո 1 տարուց ավելի ուշ ժամկետում: Բազմաբնակարան շենքի բնակիչների հետ կնքվել են գնման իրավունքի ձեռքբերման պայմանագրեր և դրանց դիմաց պայմանագրային պարտավորությունները հաշվառվել են որպես ստացված կանխավճարներ (Ծանոթագրություն 17): Համաձայն պայմանագրերի բնակարանների հետ կապված ռիսկերն ու հատույցները փոխանցվելու են բնակարանների սեփականության գրնցման պահից, ուստի դրանց գծով հասույթը ճանաչվելու է

12. Պաշարներ

	31.12.2025	31.12.2024
Ապրանքներ	4,249,558	4,862,957
Տարաներ և տարանյութեր	24,530	24,350
Վառելիք և պահեստամաս	-	476
Ընդամենը	**4,274,088**	**4,887,783**

Ակնկալվում է, որ ներկայացված պաշարները ամբողջությամբ կփոխհատուցվեն տասներկու ամսվա ընթացքում: 2025 և 2024թթ.-ների ընթացքում գրավադրված պաշարներ չեն եղել:

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2025	31.12.2024
Դեբիտորական պարտքեր ապրանքների վաճառքի գծով	5,754,548	3,887,897
Տրված ընթացիկ կանխավճարներ	899,629	459,801
Դեբիտորական պարտքեր հարկերի գծով	12,203	3,184
Այլ	471	10
Ընդամենը	**6,666,851**	**4,350,875**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:
Տե՛ս ծանոթագրություն 30 առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2025	31.12.2024
Ազգային արժույթի դրամարկղ	251,480	871,982
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	1,231,314	631,728
Բանկային հաշիվներ Արտարժույթով	26,546	44,696
Ընդամենը	**1,509,340**	**1,548,406**

15. Վարկեր և փոխառություններ

	31.12.2025	31.12.2024
12 ամսից ավելի մարման ժամկետ ունեցող բանկային վարկ	399,000	-
Ընդամենը երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	**399,000**	**-**
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող բանկային վարկ	841,990	3,100,529
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող փոխառություն	2,721,702	2,701,473
Փոխառությունների գծով հաշվեգրված և չվճարված տոկոսներ	35,713	35,713
Ընդամենը կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	**3,599,405**	**5,837,715**

- Վարկերը 9.5% տարեկան տոկոսադրույքով են և մինչև 25.11.2027 թվականը մարման ժամկետով: Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար գրավադրվել է 2,862,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսերը:
- Փոխառությունները ստացվել են կապակցված կողմերից (ծանոթագրություն 28): Փոխառությունները անտոկոս են և ունեն մինչև 12 ամիս մարման ժամկետ:

16. Վարձակալության գծով պարտավորություններ

	31.12.2025	31.12.2024
Ընթացիկ	290,728	344,286
Ոչ ընթացիկ	53,558	47,820
Ընդամենը	**344,286**	**392,106**

Ընկերությունը վարձակալել է վարչական և առևտրային հետևյալ տարածքները՝

- Գրասենյակային տարածք 1 հատ
- Առևտրային և պահեստային տարածք 3 հատ

Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ:
Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Ընկերությունը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Ընկերությանը արգելված է հիմքում ընկած ակտիվը վաճառել կամ գրավադրել: Վարձակալված գրասենյակային շենքերը և առևտրային տարածքները Ընկերությունը պետք է պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության վերջում գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ապագա նվազագույն վարձավճարները հաշվետու ամսաթվերի դրությամբ արտացոլված են ստորև

	Նվազագույն վարձավճարներ	
	31.12.2025	**31.12.2024**
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	90,000	90,000
Ֆինանսական ծախս	(36,442)	(42,180)
	53,558	**47,820**
Երկրորդից հինգ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	330,000	402,000
Ֆինանսական ծախս	(81,599)	(112,448)
	248,401	**289,552**
Հինգ տարվանից հետո		
Վարձավճարներ	49,500	67,500
Ֆինանսական ծախս	(7,173)	(12,766)
	42,327	**54,734**
Զուտ ներկա արժեք	**344,286**	**392,106**

17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2025	**31.12.2024**
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	317,010	210,660
Ստացված ընթացիկ կանխավճարներ	737,389	82,114
Հարկերի գծով պարտավորություններ	160,881	410,640
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների գծով	10,429	2,812
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	9,627	6,218
Ընդամենը	**1,235,336**	**712,444**

- Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 10 օր (2024թ.՝ 29 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:
- Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 30-ում:

18. Պահուստներ

	31.12.2025	**31.12.2024**
Արձակուրդայինի գծով պահուստ	20,102	13,733
Ընդամենը	**20,102**	**13,733**

Ակնկալվում է, որ արձակուրդային պահուստի գծով դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդերն օգտագործելիս:

19. Հասույթ

	-2025-	-2024-
Ապրանքների վաճառքից հասույթ	17,946,928	13,602,775
Ընդամենը	**17,946,928**	**13,602,775**

20. Ինքնարժեք

	-2025-	-2024-
Վաճառված ապրանքների ինքնարժեք	11,981,368	9,004,344
Ընդամենը	**11,981,368**	**9,004,344**

21. Իրացման ծախսեր

	-2025-	-2024-
Աշխատանքի վճարման ծախսեր	603,917	568,875
ՀՄ նորոգման, սպասարկման և վառելիքի ծախսեր	232,350	211,960
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	264,730	170,675
ՀՄ մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	68,171	68,171
Կոմունալ և սպասարկման ծախսեր	41,515	29,172
Այլ ծախսեր	33,368	30,482
Ընդամենը	**1,244,051**	**1,079,335**

22. Վարչական ծախսեր

	-2025-	-2024-
Աշխատանքի վճարման ծախսեր	188,483	169,303
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	19,916	43,652
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	184,186	115,637
Բանկային ծառայությունների և ապահովագրական ծախսեր	14,015	14,014
ՀՄ մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	13,667	13,667
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	51,854	149,903
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	4,996	5,295
ՀՄ նորոգման և սպասարկման ծախսեր	11,611	11,698
Վարչական այլ ծախսեր	74,623	105,717
Ընդամենը	**563,351**	**628,886**

23. Այլ ծախսեր

	-2025-	-2024-
Պաշարների փչացումից կորուստների գծով ծախսեր	178,680	156,743
Անհատույց տրամադրված ակտիվների գծով ծախսեր	-	3,805
Տույժերից և տուգանքներից ծախսեր	10,051	16,477
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	41,804	4,401
Այլ ծախսեր	45,928	45,833
Ընդամենը	**276,463**	**227,259**

24. Ֆինանսական եկամուտներ

	-2025-	-2024-
Տրամադրված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսներ	162,623	153,251
Ընդամենը	**162,623**	**153,251**

25. Ֆինանսական ծախսեր

	-2025-	-2024-
Բանկային վարկերի գծով հաշվեգրված տոկոսագումարներ	81,040	295,937
Վարձակալության գծով հաշվեգրված տոկոսներ	33,348	37,941
Ընդամենը	**114,388**	**333,878**

26. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)

	-2025-	-2024-
Վարկերի և փոխառությունների գծով	33,596	97,131
Դրամական միջոցների գծով	(21,141)	(29,587)
Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով	23,289	(8,309)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով	(1,717)	(30,039)
Ընդամենը	**34,027**	**29,196**

27. Շահութահարկ

	-2025-	-2024-
Ընթացիկ հարկի գծով ծախս	690,566	439,744
Նախորդ տարվա շահութահարկի ճշգրտում	90,469	-
Հետաձգված հարկի գծով ծախս	(2,593)	(830)
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս	**778,442**	**438,914**

Շահութահարկի արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	- 2025 -		- 2024 -	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/Վնաս մինչև շահութահարկով հարկումը	4,024,093		2,522,409	
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	(724,337)	18%	(454,034)	18%
Չնվազեցվող / (չհարկվող) հոդվածներ	(187,615)	4.7%	(79,387)	3.1%
Հարկվող շահույթ/վնաս	**3,836,478**		**2,443,022**	
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(690,566)**	**17.2%**	**(439,744)**	**17.4%**

28. Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցները, հիմնական ղեկավար անձնակազմը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ձեռնարկությունները և այլն:

28.1. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ	-2025-	-2024-
Ստացված վարձակալություն	90,000	90,000
Ստացված փոխառություններ	342,607	1,280,895
Ստացված Փոխառությունների մարում	(322,379)	(2,640,852)
Տրամադրված փոխառություն	1,074,855	-
Տրամադրված փոխառության մարում	(1,030,214)	-
Ընդամենը	**110,228**	**1,269,957**

Մնացորդներ	31.12.2025	31.12.2024
Կրեդիտորական պարտք վարձակալության գծով	9,628	6,218
Ստացված փոխառություններ	2,628,165	2,672,386
Ստացված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսներ	35,713	35,713
Տրամադրված փոխառություն	44,642	-
Ընդամենը	**2,673,506**	**2,714,317**

Փոխառությունները ապահովված չեն գրավով, ունեն մինչև 12 ամիս մարման ժամկետ և անտոկոս են:

28.2. Գործարքներ ղեկավարության հետ

	-2025-	-2024-
Աշխատավարձ և այլ հատուցումներ ներառյալ հարկերը	12,542	12,438
Ընդամենը	**12,542**	**12,438**

29. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես եկամտի և ծախսի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 6.7-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

	31.12.2025	31.12.2024
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
-Ֆինանսական ներդրումներ	8,094,155	8,084,875
-Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5,754,949	3,891,074
-Դրամական միջոցներ	1,509,340	1,548,406
Ընդամենը	**15,358,444**	**13,524,355**
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
-Վարկեր և փոխառություններ	4,289,133	6,182,001
-Վարձակալության գծով պարտավորություններ	344,286	392,106
-Կրեդիտորական պարտքեր	497,947	630,330
Ընդամենը	**5,131,366**	**7,204,437**

Յուրաքանչյուր ֆինանսական գործիք մանրամասն ներկայացված է համապատասխան ծանոթագրությունում: Ֆինանսական գործիքների ռիսկային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում: Գործիքների իրական արժեքի չափումները ներկայացված են Ծանոթագրություն 31:

30. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերի կառավարումն Ընկերության համար ունի կարևոր նշանակություն: Դրանք հիմնականում կապված են պարտքային, իրացվելիության և արտարժույթի ռիսկերի հետ:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ կապակցված կողմերին տրված փոխառությունները, բանկերում պահվող դրամական միջոցները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է անհատական հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը գնահատվել է զրո:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով

բ) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

	31.12.2025			31.12.2024		
	USD	EUR	RUB	USD	EUR	RUB
Ֆինանսական ակտիվներ						
-Դեբիտորական պարտքեր	9,936	-	-	9,826	-	-
-Դրամական միջոցներ	8,667	5,835	12,044	11,804	11,320	21,572
Ընդամենը	**18,603**	**5,835**	**12,044**	**21,630**	**11,320**	**21,572**
Ֆինանսական պարտավորություններ						
-Ստացված փոխառություններ	662,574	12,123	-	2,117,880	11,175	-
-Կրեդիտորական պարտքեր	74,950	54,448	-	53,161	9,791	743
Ընդամենը	**737,524**	**66,571**	**-**	**2,171,041**	**20,966**	**743**
Զուտ արդյունք	(718,921)	(60,736)	12,044	(2,149,411)	(9,646)	20,829

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ արտարժույթների նկատմամբ դրամի աճին/նվազմանը: Նշված տոկոսադրույքները ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխություններն են:

Դրամի արժևորումը համապատասխան արժույթի նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը Ընկերության շահույթի կամ վնասի վրա.

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		ՌԴ ռուբլու ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	71,892	214,941	6,074	965	(1,204)	(2,083)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքով վարկեր:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել և անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և տրված փոխառությունները:

Ստորև ներկայացված է Ընկերության ակտիվների ընթացիկ իրացվելիության վերլուծությունը

	31.12.2025	31.12.2024
Ընթացիկ ակտիվներ	12,503,389	12,187,064
Ընթացիկ պարտավորություններ	5,262,912	6,797,511
Ընթացիկ իրացվելիության գործակից	**2.4**	**1.8**
Արագ իրացվելի ակտիվներ*	8,229,301	7,299,281
Ընթացիկ պարտավորություններ	5,217,920	6,797,511
Արագ իրացվելիության գործակից	**1.6**	**1.1**
Դրամական միջոցներ և համարժեքներ	1,509,340	1,548,406
Ընթացիկ պարտավորություններ	5,217,920	6,797,511
Բացարձակ իրացվելիության գործակից	**0.29**	**0.23**

* Արագ իրացվելի ակտիվների կազմում ներառվում են Ընկերության բոլոր ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ պաշարների:

31. Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.
1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)

Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:
Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները, տրամադրված փոխառությունները, ժամկետային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:
Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:
Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակով:

32. Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է այնպես, որ ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի: Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք: Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ղեկավարության գնահատմամբ՝ Ընկերությունն ունի բավարար ռեսուրսներ իր գործունեության շարունակականությունն ապահովելու և պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար:

	31.12.2025	31.12.2024
Զուտ պարտք		
Վարկեր և փոխառություններ	4,289,134	6,182,002
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(1,509,340)	(1,548,406)
	2,779,794	**4,633,596**
Սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	19,124,390	15,878,738
	19,124,390	**15,878,738**
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	**0.15**	**0.29**

* Ընկերությունը իր կապիտալը կառավարում է այնպես, որ ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

33. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Ընկերության գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Ընկերության չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման

անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

ե) Գրավադրված ակտիվներ

Ընկերությունը ստացված վարկերի դիմաց ունի գրավադրված ակտիվներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

դ) Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջներըև վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանույթուններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

34. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած, ինչպես նաև մինչև աուդիտորական եզրակացությունը ընկած ժամանակահատվածներում: